

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 914 + 23/28 + 551

DOI: 10.54503/0321-1339-2022.122.1-87

Ա. Ս. Սահակյան

Երկրաշարժի ընկալումը միջնադարյան Հայաստանում*

(Ներկայացված է ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Լ. Ն. Աբրահամյանի կողմից 25/II 2022)

Բանալի բառեր. *երկրաշարժ, Աստված, եկեղեցի, միջնադար, նշան, մեղք, պատիժ, նախազգուշացում:*

Ի՞նչ բան էր երկրաշարժը միջնադարցի մեր նախնիների ընկալմամբ, ինչպե՞ս էին նրանք հաղթահարում այդ բնական աղետը, արդյոք հին ու նոր երկրաշարժերն իրենց նմանությամբ օգնում են մեզ ավելի խոր զգալու մեր և մեր նախնյաց պատմության միասնականությունը, նրանց և մեր միջով անցնող մեր պատմական ճակատագրի գիծը:

Միջնադարյան մեր նախնիները իբրև դառը և նեղ ժամանակների արտահայտություններ՝ կողք կողքի էին դնում թե՛ բնական և թե՛ հասարակական աղետները, որոնց ոչ լրիվ ցանկի մասին գաղափար է տալիս XVII դ. գրիչ Սարգիս Խիզանցու օրինակած ձեռագրի (Մաշտոց) հիշատակարանը.

«Ի յայսմ ամի (այսինքն՝ 1626 թ.) գրեցաւ սուրբ գիրքս ի դառն եւ ի չար ժամանակիս, զի յամէն դիմաց դառնութիւն եւ վիշտն պատեր է Հայոց տառապեալ ազգիս, սով, սուր, գերութիւն, մահտարածամ, շարժ եւ տապալումն, ժանկ, մարախ, թրթուր, ջորեակ, դալուկ, հեղեղ անթիւ եւ անհաշիւ, որ ոչ կարեմ ընդ գրով արկանել» ([1], էջ 234):

Նման վկայություններն այնքան շատ են միջնադարյան ձեռագրերում, որ երբեմն զարմանում ես, թե ինչպես են տարել ու հաղթահարել այս ամենը: Ժողովրդի կենսունակությունը, իհարկե, անսահման է, և նրա ֆիզիկական գոյատևումը դրա արդյունքն է, բայց ահա ինչպես է

* Կարդացվել է իբրև զեկուցում ԳԱԱ-ի՝ 1988 թ. երկրաշարժի հնգամյակին նվիրված գիտաժողովում:

դիմացել հոգեպես, ինչպես է մարդը կարողացել այսքան մահերի ու կորուստների մեջ պահել հոգեկան հավասարակշռությունը:

Բանն այն է, որ մարդկանց բազմաքանակ գոհերը ի վերջո հանգում են ամեն մի առանձին անհատի մահվան, ծեր թե մանուկ, միևնույնն է, ընդհատվել է մի հարազատ շունչ, հեռացել է մի հուր հոգի: Եվ ահա, ի տարբերություն մահվան ժամանակակից ընկալման, միջնադարում մահը դեռ լրիվ կորուստ չէր, որովհետև դրանով դեռևս վրա չէր հասնում կործանումը, պարզապես հոգին լքում էր իր մարմինը և հարատևում մինչև աշխարհի վերջը՝ Ահեղ դատաստան, Կատարած: Իսկ ապրողները հիշատակի խնկարկումով, աղոթքներով ու ողորմիներով թողություն էին խնդրում այդ հոգու փրկության համար՝ հուսալով, որ իրենց բարեխոսությունը կհասնի երկինք՝ Բարձրյալին: Սա՛ մեկ: Երկրորդ. միջնադարում ամեն մի բնական աղետ, որ իրարանցում և հասարակական կենսակարգի խախտում է բերում, նախօրոք «ծրագրված», «կանխատեսելի» լինելով, ուներ իր տեղը համայնքի մշակութային կյանքի համակարգում, կուլտուրայի (լայն առումով) այն միկրոկոսմոսում (փոքրաշխարհ), առանց որի անհնար է համակեցությունը: Այլ կերպ ասած, տվյալ աղետը որքան էլ «բնական» ու վերամարդկային իրողություն լինի, միևնույնն է, այն մշակութայնացվում է և դառնում բացատրելի մարդկային կյանքի համակարգում: Այժմ տեսնենք դրա դրսևորումը երկրաշարժի օրինակով:

Շարժի մասին վկայող բնագրերում ակնհայտորեն երևում են «երկրաշարժի» մշակութայնացման հետևյալ միջոցները՝ փրկչական աշխատանքներ, թաղում և ողբ, պատճառի բացահայտում, նշանի բացահայտում, փառատրություն, վերակառուցում «առավել պայծառագույն»: Մրանք այն լծակներն են, որոնց օգնությամբ հասարակական կյանքում վրա հասած քառսը աստիճանաբար վերակազմակերպվում և վերադառնում է նախկին կանոնավոր տիեզերաշենքին:

Երբեմն կարող է թվալ, թե քառսի իշխանությունն անդիմադրելի կարող է լինել, եթե շարժը ընդգրկի երկրի կենտրոնը, ասենք որևէ քաղաք, այդ քաղաքի կենտրոնը՝ ասենք որևէ սրբավայր՝ եկեղեցին, այն էլ այնպիսի մի սահմանային ժամանակում, երբ ժողովուրդը տոնում է Ջատիկ կամ Նոր տարի: Բայց դա հատուկ չէ միջնադարյան հասարակությանը, ինչպես երևում է մի շարք օրինակներից: Դեռ ավելին, Ջատիկի օրվա շարժը կարող է ընկալվել իբրև Հարության գիշերվա կրկնություն, երբ երկիրը պատռվում է, Քրիստոսի գերեզմանի պահապանները խռովվում են, և նա հառնում է, ինչպես բացատրում է 5-րդ դարի հայ վարդապետը ([2], էջ 483):

1457 թ. գրիչ Սահակ Աղբակեցին իր օրինակած Հայսմավուրքի հիշատակարանում գրում է, թե վերջին մի քանի տարիներին ինչ չարիք-

ներ եկան Վասպուրական աշխարհին (հարկահանություն, մորեխ, մահտարածամ), որոնք ավարտվեցին ուժգին երկրաշարժով.

«... Եւ դարձեալ երկու ամաւ մինչ ի յայս ամս, որ եմք ի մեջ, նոր, կրկին աստուածասաստ բարկութիւն սփռեցաւ յաշխարհս Հայոց, վասն անթուելի մեղաց իմոց, մանաւանդ Վանայ քաղաքին, գեղարեւիքն եւ յՈստանայ մինչ ի Խաւշաբ, զի ի յԱւագ մեծի ուրբաթի զիշեր, լոյսն ի շաբաթ, որ էր Ջատիկ, Աստուած բարկացաւ եւ շարժեց զերկիր ի բազում տեղիս, եւ այն, որ ի Վան եւ յՈստան շարժեաց: Մարդոք չէր տեսեալ եւ ոչ ի պատմութեանց լուեալ, զի ո՛չ վանք մնաց, ո՛չ քաղաք, ո՛չ գեղ եւ ո՛չ շինութիւն, զի Խ. (40) եկեղեցի Վանայ բոլոր մինչ ի Հայկաձոր ի հիմանց բլան այն հրաշի արն եւ սուգ ածին քրիստոնէից եւ զաւերումն տանց եւ բարձրաշէն ապարանից. եւ զմնացեալ մարդ, կին եւ տղայ եւ անասուն, որ ի տան, հողի տակն մնացին, չկարողացաք իմանալ եւ ի գիր արկանել, զի անթիւ էր, բայց նորա միայն է գիտելի, որ արար զնա վասն մեղաց մերոց... Փառք Աստուծոյ Ռ. (1000) բերան»:

Այսպիսով, երկրաշարժը տնօրինում է Աստված, որին բարկացրել է մարդկային մեղքը, և գրիչը իրեն և յուրայիններին համարում է մեղավոր: Շատ հետաքրքիր է այդ պահը, երբ ինքն իրեն համարում է համընդհանուր աղետի պատճառ իր իսկ ընդօրինակած ձեռագիր Մաշտոցում. «... Հայոց նոր տոմարիս :ՅԽԲ (342+551=893) կատարեցի զնուաստ գրկունս զայս, յորում ամի կործանեցաւ Դուին քաղաք ի շարժմանէ եւ բազումք մեռան եւ եկեղեցիք տապալեցան: Այս իր գործեցաւ վասն ծովացեալ մեղաց իմոց» ([3], էջ 42, 43):

Դա իսկական բարոյականության բարձրակետն է, որին հասել է շարքային գրիչը՝ մի տեսակ հակադրվելով միջնադարի այն բարձր, մտավորական ճգնավորներին, ովքեր իրենց վրա էին վերցնում բոլորի մեղքերը՝ կամավոր ներկայանալով իբրև զոհահերոս: Բայց աշխարհի, մարդկանց փրկությունը ոչ թե սեփականի հետ նաև բոլորի մեղքերը հանձն առնելը է, այլ քեզ, սեփական անձը բոլորի դժբախտությունների, աղետյալ վիճակի պատճառ համարելը: Ըստ գաղափարի, եթե II զիտակցումը տիրապետող դառնա, ապա մարդը կընկնի իրոք մաքրագործման ուղին և մեկընդմիջտ կմոռանա իր կործանարար բարքերը: Փաստորեն շարժը փրկվածների համար կործանումից խուսափելու միջոց է:

Բայց ինչո՞ւ բոլորը, որոնք ներքաշված էին անվայել բարքերի մեջ, հավասարապես պատժվելով, չեն կործանվում: Որովհետև, միջնադարյան ընկալման համաձայն, երկրաշարժը ոչ թե բոլորին կործանելու, այլ նրանց ահազդու նշան տալու միջոց է, որ զգուշանան, վերափոխվեն ու մաքրագործվեն: Երկրաշարժն իբրև հրաշալի նշան է

ակնարկվում բերված բնագրում (հրաշի արն), բայց բերենք ավելի տեսանելի օրինակ. XV դ. Միսկին երեց Անուշպակցին իր. «Ողբ մայրաքաղաքին Եզրնկու, որ շարժ եղաւ եւ կործանեցաւ» չափածո գրվածքում, նկարագրելով 1482 թ. Երզնկայի երկրաշարժը, գրում է.

*Յինն հարիւր Հայոց թըրվական,
Երեսուն եւ մեկ թիւն ի լըման (931+551=1482)
Չարմանալի բան մի եղաւ
Մայրաքաղաքն ի յԵզրնկան...
Բոլոր քաղաքն աւերեցաւ,
Ի յանդրնդոց երկիր շարժաւ,
Երկու տարպայ հինգ հազարան
Ներքեւ հողոյն զընտանեցաւ:
Մըսկին երեց Անուշպակցի
Մեղօք ի լի եւ անարաժան,
Արդ հերիք է զհնչ գործեցիր,
Դարձից եւ լեր դու փօշիման:
Ես աղաչեմ զքեզ միարան,
Որ չը կտրէք զՏէր մեղան,
Մեղքն քակեց ըզգԵզրնկան,
Այս աշխարհիս է մեծ նըշան ([4], էջ 21):*

Բերված օրինակից հասկանալի է դառնում, թե ինչու «վասն ծովացեալ մեղաց իմոց» եղած նշանը, այն է՝ երկրաշարժը, կոչվում է նաև... ահարկու, զարմանալի, մեծ, հիանալի: Ստացվում է, որ աստծո ուղարկած աղետը դարձյալ մարդկային ցեղի հանդեպ նրա ունեցած հոգատարության և բարեսրտության արդյունք է: Հետևաբար՝ բնական է, որ բարեպաշտ գրիչը շարժի նկարագրությունն ավարտի փառատրությամբ, որպիսին մի անգամ արդեն տեսանք, և որի ամենադիպուկ ու լակոնիկ արտահայտությունը XIII դ. Հովհաննես գրչի հիշատակարանն է իր ձեռագիր ավետարանից.

«Յուլիս ամսոյ Թ. յաւուր երեքշաբթի պահոցն Այլակերպութեանն, ընդ Զ. ժամն եւ ընդ Թ.ի մէջ շարժ եղել լաւ: Փառք Աստուծոյ» [5]:

Այս, այսպես կոչված, «նախագուշական նշանի» մերօրյա արտահայտությունը եղավ «Աստված վատթարեն ազատի» խոսքը, որ հաճախ էինք լսում այս ու այն կողմից դեկտ. 7-ին հաջորդած օրերին:

Այսքանից հետո բանը հասնում է այնտեղ, որ միջնադարյան հայացքը երկրաշարժը «կուլտուրականացնելու» արդեն ուղղակի միջոցներ է գտնում. օրինակ, մի սրբի անեծքով շարժը հրահրվում է աստծո առաջ կամ մի այլ սրբի կողմից շարժը կանխագուշակվում է, և միաբանության ժողովուրդը փրկվում է արհավիրքից: I-ի օրինակը կարելի է կարդալ Ստեփանոս Սյունեցու վարքում, II-ինը մեջ ենք բերում ըստ

Գարեգին Հովսեփյանի ([6], էջ 175): Ի դեպ, II-ը պատմում է նաև Դվինի հերթական երկրաշարժի մասին. «... Եւ իբրեւ հեռացան (միաբանքն) միով մղոնաւ հեռի ի վանացն, եւ ահա իսկոյն շարժ եկն սաստիկ, եւ հոսեաց զվանքն հանդերձ լերամբն ի վայր կոյս իբրեւ նետընկեց մի, եւ յայնմ շարժմանէ տապալեցան շատ շինուածք ի բազում տեղիս, բայց ի Դուին քաղաքի մեռան ոգիք իբրեւ 62000 (վաթսուն եւ երկու հազարք) յայնմ շարժմանէ ընդ Հայ և ընդ Հրէայ և ընդ Պարսիկ»: Թե՛ նշան-շարժի ահագոյն իմաստը, թե՛ վերոնշյալ սրբերի կապը երկրաշարժերի հետ թույլ են տալիս ասել, որ նման աղետալի իրարանցման պայմաններում տուժածները և փրկվածները, ինչ-որ պահի սթափվելով իրենց «ինքնահոս» մեղսաբեր կյանքից, սկսում էին ջերմեռանդորեն նոր տեսիլներ տեսնել, սրբերի դռները գնալ կամ նոր սրբեր հայտնաբերել:

Այդ առումով անչափ խոսուն է Մխիթար Այրիվանեցու Պատմութեան մի ժամանակագրական փոքրիկ տվյալ՝ կապված Էաս Ալեքսանդրացու ժամանակագրական ցիկլի 500-ամյակի լրման հետ. 552 թ. «Շարժ ահագին ընդ ամենայն աշխարհ... վա՛յ զԱնտիոք: Աջ աստուածային երեւեցաւ ՚ի սուրբ մատրանն, եւ ՚ի սուրբն Սիոն՝ Աստուածածին՝ Յիսուս ՚ի գրկին» ([7], էջ 48): Այս փաստը հիշարժան է նաև վերջերս (1989-90 թթ.) Մասիսի՝ Մայաթ-Նովայում, Զվարթնոցում և այլուրեք եղած սրբահայտությունների առնչությամբ:

Երկրաշարժի նշանաբանության ասպարեզում մեծ դեր էր վերագրվում երկնի աստղերին, նրանց հայտնությանն ու ձայներին.

«Յառաջ քան զշարժն եղել ինչ յերկինս. զի տեսին ի զիշերի միում յօդս՝ որպէս թե նիզակաբունս կապուտս... երկոքին ծայրքն բարակ որպէս գեղարդի. եւ սակաւ-սակաւ դարձոյց զտտունս իւր յարեւելս եւ յարեւմուտս... եւ անհայտ եղել: ...Յետ այսարիկ երեւեցաւ յարեւելս աստղ մի կարմիր որպէս որդան. եւ ուներ երիս գէսս. մին սպիտակ, ստղագոյն եւ մին խարտեաշ՝ բոլորագունդ, ինքն բարձր եւ գէսքն կախեալ դէպ ի երկիր, ինքն կայր անշարժ, գէսքն շարժէին երբեմն-երբեմն... եւ յետ վեց աւուրց գէսքն ցրուեցան...» ([8], գլ. ԾԳ):

Նմանատիպ երկնային նշաններ են ուղեկցել նաև XI դ. մի երկրաշարժի, որի մեկնությունը տրված է Կոզեռնի տեսիլքում:

Փաստորեն մինչև այժմ դիտարկեցինք շարժերի ընկալման և հաղթահարման հստակ միջնադարյան վկայություններ, որոնց մեջ տիրապետող էր իռացիոնալ տարրը: Մակայն միջնադարցիք, երկրաշարժի «սուրբեկտիվ» պատճառներից և նշանակությունից բացի, նաև ուշադիր էին այդ երևույթի առաջացման մեխանիզմի վրա: Թովմա Արծրունին, պատմելով 893 թ. Դվինը վերջնականապես կործանած երկրաշարժի մասին, գրում է. «Բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց ՚ի կոխակս անդնդաքակս, զթանձրայատակ երկրի զկարծր և զծա-

նրալիք անկշիռ անբաւոյթիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի՝ ՚ի վեր մղեալ, հանդէպ քաղաքին Արտաշատու, որ Բլուրն նորուն ասի (Դվին բառի թարգմանությունն է: – Ա. Ս.), յորում շահաստանն Դուին՝ մարդախիտ, պարսպապատ պատնիշօք պատուարեալ, եւ տուրեւառիկ վաճառականութեամբ, եւ ազգի-ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ, գնա ի հիմանց տապալեալ... Եւ ասի լինել թիւ մարդկանն ապականելոց ի շարժմանէ՝ ոգիս առաւել քան ՀՌ (եւթանասուն հազար): Այս շարժումն սաստկագոյն քան որ եղեւ յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, եւ յետ է (7) ամի գերութեանն Հայոց: Անդ հանդիպեալ լիներ եւ երանելի եպիսկոպոսն Ռշտունեաց Գրիգոր վսամ (՝), ոչ կարաց իւրայութն գերծանել իբրև յայնժամ առողթաւ (՝) ի լեառն (հավանաբար՝ «առ աղոթաւ էր» աղավաղումից: – Ա. Ս.), (հմմ. [9]): Բայց երանելի հայրապետն Տէր Գեորգ ... թողեալ զբնակելն ՚ի Դուին, ելեալ բնակեցաւ ՚ի Նորաքաղաքն ՚ի մեծ եկեղեցւոջն, որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելոյ տեառն Ներսիսի երրորդի Հայոց կաթողիկոսի» ([10], գլ. ԻԲ, 371, 372):

Այսպիսով, Թովմա Արծրունու պատկերացմամբ ստորերկրյա ջրային հողմերի միջոցով առաջ եկած տատանումը, որ երկրի երես է ելել Արտաշատ-Դվինի շրջակայքում, անուղղակիորեն պատճառաբանվում է միևնույն ծանոթ երևոյթով, այն է՝ մարդախիտ Դվինի առևտրական և տեսակ-տեսակ պղծություններով հղփացած մարդկանց բարքերով: Թովմա պատմիչը իր գրավոր կամ բանավոր աղբյուրների հիման վրա գոհերի թիվը հաշվում է 70000 (ըստ Գ. Հովսեփյանի «Յիշատակարանքի»՝ 62000, տե՛ս վերը), որից պետք է ենթադրել, որ հարվածը շատ հզոր, և կործանումն էլ համատարած է եղել, դրա համար էլ 893 թ. Գևորգ կաթողիկոսը աթոռը տեղափոխում է Զվարթնոց: Վերջինս սրանով երկրորդ անգամ է դառնում հայ կաթողիկոսի նստավայր, սակայն ժամանակավոր, որպեսզի դրանով կաթողիկոսը լրիվ լքած չլիներ Դվինը, որ պետք է վերակառուցվեր արդեն որերորդ անգամ:

Մ.Մաշտոցի անվան Մատենադարան

Ա. Ս. Սահակյան

Երկրաշարժի ընկալումը միջնադարյան Հայաստանում

Ինչպես բնական և հասարակական աղետները, երկրաշարժը ևս միջնադարցու կողմից ընկալվում էր իբրև մեղքերի պատճառով մարդկանց ուղղված աստվածային պատիժ, որը կոչված էր մարդկությանը նախազգուշացնելու ավելի դաժան պատիժներից և դարձի բերելու դեպի արդար կենցաղավարում և կրոնազգեցություն: Ստաց-

վում է, որ Աստված, մարդու հանդեպ անսահման սիրուց դրդված, նրան աղետանշաններ է ուղարկում, որոնց շնորհիվ վերջինս փառաբանում է Աստծուն և հետ կանգնում մեղաբեր կյանքից հանուն իր փրկության:

А. С. Саакян

Восприятие землетрясения в средневековой Армении

Природные и социальные катастрофы, в том числе землетрясение, воспринимались в средневековье как божественная кара, посланная человеку за его грехи и были призваны предостеречь человечество от более сурового наказания, обратив его к праведному, религиозному образу жизни. Бог, безгранично любя человека, ниспосылал ему бедствия как знаки предупреждения, чтобы он отступил от греховной жизни ради своего спасения и прославлял за это Бога.

A. S. Sahakyan

Earthquake Perception in Medieval Armenia

Natural and social catastrophes, including earthquake, were perceived in medieval times as a divine punishment sent to human beings for their sins and intended to warn humanity from a more severe punishment by turning it to a righteous, religious way of life. The God, with boundless love for man, was sending down disasters to him as signs of warning, so that he retreated from a sinful life for the sake of his salvation and glorified God for this.

Գրականություն

1. Հիշ. 1978 – Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Աշ. Հովհաննիսյան, Երևան, 1978:
2. Ազգաթանգեղոս – Ազգաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխ.՝ Գ. Տեր-Մկրտչյան և Մտ. Կանայեանց, Տիֆլիս, 1909:
3. Հիշ. 1988 – Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխ.՝ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988:
4. Հիշ. 1967 – ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967:
5. Հիշ. 1984 – Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984:
6. Յիշատակարանք – Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951:
7. Այրիվանեցի – Մխիթարի Այրիվանեցոյ Պատմություն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860:

8. Ջաքարիա – Ջաքարեայ Սարկավագի Պատմագրություն, Վաղարշապատ, 1870:
9. Աճառյան, ՀԱԲ – Հրաչեայ Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երևան, 1926:
10. Արծրունի – Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917: